

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ /THEORY OF STATE AND LAW  
/ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ  
*«ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ»*

SARGIS ARMENAKYAN  
*Phd student of the Institute of Philosophy,  
Sociology and Law of NAS RA*

ՏԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ  
*Соискатель Института философии,  
социологии и права НАН РА*

**ՀՌՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌԵՑԵՊՏԻՎԱՅԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ  
ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

**ON THE PROBLEMATIC ISSUES OF RECEPTION  
OF ROMAN LAW**

**О ПРОБЛЕМНЫХ ВОПРОСАХ РЕЦЕПЦИИ РИМСКОГО ПРАВА**

Իրավաբանական գրականության մեջ<sup>1</sup> «հռոմեական իրավունքի ռեցեպցիա» կոչվող երևույթը, անկասկած կարելի է դասել միջնադարյան արևմտաեվրոպական հասարակության պատմության առանցքային երևույթների թվին: Դրանում տեղի ունեցող բոլոր հիմնական սոցիալ-տնտեսական, քաղաքական և գաղափարական գործընթացներն այս կամ այլ կերպ առնչվում էին Հին Հռոմի իրավական մշակույթի տարրերի օգտագործման հետ<sup>2</sup>, Անգլիացի իրավագետ Խ. Դ. Հազելթայնի խոսքերով՝ «ամբողջ լրիվությամբ նկարագրել միջնադարյան քաղաքակրթության պատմությունը՝ Եվրոպայի կյանքն իր զարգացման մեջ ու փոփոխություններում հարյուրամյակների ընթացքում»<sup>3</sup>: «Հռոմեական իրավունքի ռեցեպցիա» թեման պատկանում է եվրոպական պատմաիրավական գիտության առավել տարածված թեմաների թվին: Դրա պատմագրությունը հաշվարկում են արդեն հազարավոր գրքեր ու հոդվածներ, և ամեն տարի վերջինների թիվը մե-

<sup>1</sup> Տես՝ Косарев А.И., Римское право, М 1986.

<sup>2</sup> Томсинов В.А., Значение римского права в общественной жизни Западной Европы в XI-XIII вв. // Древнее право, М., 1997, էջ 112-119: Նույն հեղինակի Римское право в средневековой Англии // Ан- тичная древность и Средние века, Проблемы социального развития. Свердловск, 1985, էջ 122-134:

<sup>3</sup> Տես Hazeline H.D., Roman Law and Canon Law in the Middle Ages// The Cambridge Medieval History. Vol.5, էջ 703:

ծանում է: Թեպետ, Եվրոպայում հռոմեական իրավունքի ճակատագրի մասին գիտական աշխատանքների հսկայական զանգվածում մինչ օրս արդիական է գերմանացի հայտնի իրավագետ Ֆ. Կ. Սավինիի «Միջնադարում հռոմեական իրավունքի պատմություն» յոթատորանոց կոթողային աշխատությունը, որը ստեղծվել է դեռևս անցյալ հարյուրամյակի սկզբին<sup>4</sup>:

«Հռոմեական իրավունքի ռեցեպցիա» թեմայի գիտական մշակման երկու հարյուրամյակի ընթացքում կուտակվել է հսկայական փաստագրական նյութ, սակայն, մեր կարծիքով, այն բավականաչափ իմաստավորված չէ: Այդ բարդ երևույթի մասին աշխատությունների շարքում ակնհայտորեն գերակշռում են կոնկրետ բնույթ ունեցող աշխատությունները, որոնք մանրամասնորեն շարադրում են դրա այս կամ այն կողմերը: Ընդ որում՝ աշխատությունների զգալի մասը նվիրվում է «Հռոմեական իրավունքի ռեցեպցիային»՝ այս կամ այն արևմտաեվրոպական երկրում կամ անգամ երկրամասում<sup>5</sup>: Ինչ վերաբերվում է ընդհանուր բնույթի աշխատություններին, որոնցում լուծում կատանար նշված երևույթի իմաստի մասին հարցը, ապա դրանք, ցավոք, սակավաթիվ են<sup>6</sup>, և, ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ «Հռոմեական իրավունքի ռեցեպցիա» կոչվող երևույթի էության հիմնախնդիրը մնում է չլուծված: Թեպետ, այլ բան դժվար թե կարելի է սպասել:

Գործնականում իրավունքի ռեցեպցիան հազվադեպ է ի հայտ գալիս մաքուր տեսքով: Լինում է նաև այնպես, որ արտաքննապես իրավունք ռեցեպցիային նմանվող երևույթը իրականում ռեցեպցիա չէ:

Հատկապես բարդ երևույթ է այն, ինչը կոչվում է «Միջնադարում Արևմտյան Եվրոպայում հռոմեական իրավունքի ռեցեպցիա»: Այդ թեմայի գիտական մշակման համար երեքից ավելի դարերի ընթացքում կուտակվել է հսկայական փաստացի նյութ: Սակայն այն, մեր կարծիքով, չի իմաստավորվել դեռևս բավարար չափով: Հռոմեական իրավունքի տարածումը միջնադարյան հասարակության իրավագիտության մեջ կոչվում է իրավունքի ռեցեպցիայի դասական նմուշ:

«Գիտական իրավաբանների՝ գլոսատորների և մեկնաբանողների կողմից տարածվող հռոմեական իրավունքն ամբիոններից ներթափանցում էր կյանքի, և Արևմտյան Եվրոպայում հռոմեական իրավունքի այս ընկալումը կոչվում է հռոմեական իրավունքի ռեցեպցիա», - ասվում է Ի. Ա. Պոկրովսկու «Հռոմեական իրավունքի պատմություն» գրքում<sup>7</sup>: Ս. Ա. Մուրոմցևը Միջին դարերում Արևմտյան Եվրոպայում հռոմեական իրավական նորմերի գործողությունը նույնպես հասկանում է իբրև «ռեցեպցիա», ինչի մասին է վկայում արդեն այս թեմայով նրա աշխա-

<sup>4</sup> Sten Savigny F.C. Geschichte des romischen Rechts in Mittelater. Bd. 1-7. Heidelberg, 1815-1826:

<sup>5</sup> Sten, օրինակ. Schmidt K.A Die Rezeption des romischen Rechts in Deutschland. Rostock, 1868; Below G. Die ursachen der Rezeption des romischen rechts in Deurchland. Munchen und Berlin, 1905; Peter H. Romisches Recht und englisches Recht. Wiesbaden, 1969; Coing H. Romisches Recht in Deutschland. Mediolani, 1964; Carlin M. L. La penetration du droit romain dans les actes de la pratique provencale (XI-XII siecle). Paris, 1967; Schnell R. Andreas Capellanus: Zur Rezeption des romischen und kanionischen Rechts in de Amore. Munchen, 1982.

<sup>6</sup> Դրանց շարքում կարելի է առանձնացնել հետևյալ գրքերը, Koschaker P. Europa und romische Recht. Munchen - Berlin, 1958; Berman H. Law and revolution. The Formation of western legal tradition. Cambridae and London. 1983:

<sup>7</sup> Sten, Покровский И.А. История римского права. СПб., 1915, էջ 277:

տության անվանումը՝ «Հռոմեական իրավունքի ռեցեպցիան Արևմուտքում»: Յու. Բարդախի «Պետության պատմության մեջ ռեցեպցիա» հոդվածում բնութագրում է «հռոմեական իրավունքի ռեցեպցիան միջնադարյան ու ժամանակակից Եվրոպայում»՝ որպես իրավունքի ռեցեպցիայի «դասական» տարբերակներից մեկը: Նման կերպով Ա. Ի. Կոսարյևի, Դ. Վ. Դոժոյովի, Ե. Օ. Խարիտոնովի և իրավունքի այլ պատմաբանների աշխատություններում իբրև «իրավունքի ռեցեպցիա» է հասկացվում միջնադարյան եվրոպական հասարակության կողմից հռոմեական իրավական ձևերի ընկալումը:

Արևմտյան Եվրոպայում «հռոմեական իրավունքի ռեցեպցիայի» սկիզբը սովորաբար համարվում է 11-րդ դարի վերջը ու կապվում է Բոլոնյան իրավաբանական դպրոցի գործունեության հետ, որը 12-րդ դարի սկզբին դարձավ համալսարան: Մեզ հասած ավանդույթի համաձայն՝ 1088 թվականին իր ժամանակների ամենահեղինակավոր իրավագետ Իոներիուսը (Itrnerius), այլ տարբերակներում՝ «Guarnerio, Wernerius», ուսումնական հաստատությունում սկսեց դասավանդել հռոմեական իրավունքն անվանվածը: 12-13-րդ դարերի ընթացքում հռոմեական իրավունքի ուսումնասիրությունն իրականացվում էր այնպես, ինչպես Բոլոնիայում, դուրս եկավ Հյուսիսային Իտալիայի սահմաններից և լայնորեն տարածվեց այլ արևմտաեվրոպական երկրներում: Արևմտյան Եվրոպայում առաջացան մի շարք նոր համալսարաններ<sup>8</sup>:

Հռոմեական իրավունքի «ռեցեպցիայի» նախնական փուլը, որն ընդգրկում է երկու դարերից ոչ ավելի՝ 11-րդ դարի վերջից մինչև 14-րդ դարի սկիզբը, սահմանվում է պատմաիրավական գրականության մեջ իբրև գլոսատորների դարաշրջանը: Այն փոխարինվեց հետգլոսատորների կամ մեկնաբանողների դարաշրջանով, որը տևեց մինչև 16-րդ դարը: 16-17-րդ դարերում հռոմեական իրավունքի ուսումնասիրման գործում ճնշող դեր են խաղացել մարդասեր-իրավագետները: Հետագայում իրավաբանների այս դպրոցին փոխարինելու է եկել պանդեկտիստների դպրոցը:

Ինչպես հայտնի է, Արևմտյան հռոմեական կայսրության տապալումից հետո Եվրոպայում երբեք չի դադարել հռոմեական իրավական նորմերի գործողությունները: Ավելին, ստույգ պատմական նյութը ցույց է տալիս, որ հռոմեական իրավունքը շարունակում էր ուսումնասիրվել: «Ներկա ժամանակներում,- նշում էր Ե. Կանտորովիչը, -գոյություն ունի գրեթե ընդհանուր սկզբունք իրավունքը դասավանդելու վերաբերյալ, որը 600-1080 թվականներին մասամբ կիրառական էր, օրինակ՝ նոտարների գրասենյակներում», մասամբ՝ տեսական, այն առնչվում էր արվեստների դասավանդման հետ»:

Ամբողջ վաղ միջնադարի ընթացքում Արևմտյան Եվրոպայում գոյություն են ունեցել, այդպես կոչված, «հումանիտար գիտությունների դպրոցները», որոնցում դասավանդվում էին քերականություն, հռետորականություն, դիալեկտիկական և այլն: Այն յուրահատկությունները, որոնք ունեին նշված առարկաները, անխուսափելիորեն պետք է ուսումնասիրվեին իրավունքին զուգահեռ: Այդպես, օրինակ,

<sup>8</sup> Տե՛ս ավելի մանրամասնորեն Խ. Ռաշդալի հիմնարար հետազոտությունը. Rashdal H. The Universities of Europe in the Middle Ages. Vol. 1-3. Oxford, 1936:

հռետորականությունը բաժանվում էր երեք մասի՝ ապացուցողական, մրցողական և դատական: Քերականությունն ընդգրկում էր ոչ միայն բուն քերականության տեխնիկական կանոնները, այլև հին հռոմեական տեքստերի ուսումնասիրումն ու մեկնաբանումը: Դրանցից շատերը պարունակում էին տարբեր տեղեկություններ կամ մտորումներ հռոմեական իրավունքի մասին:

Սակայն քերականության ու հռետորականության ուսումնասիրումը հետապնդում էր ավելի կիրառական, քան զուտ գիտական նպատակներ: Խ. Ռաշդալի խոսքերով, «Իտալիայում այդ առարկաներն ուսումնասիրվում էին ավելի շուտ նպատակ ունենալով իրավաբանական փաստաթղթեր կազմելու հմտությունները մշակելու և որպես նոտար ու փաստաբան աշխատանքին նախապատրաստելու նպատակով: Անգամ տրամաբանությունը դիտվում էր ավելի շատ իբրև դատարանում բանական վեճերի համար բանականության զարգացման միջոց, քան որպես բանալի աստվածաբանության գաղտնիքների նկատմամբ»<sup>9</sup>:

Ունիվերսալ բնույթ կրող հումանիտար դպրոցների հետ մեկտեղ վաղ միջնադարում գոյություն ունեին նաև հատուկ իրավաբանական դպրոցները: Պավիայում 10-րդ դարում գործող այդպիսի դպրոցի մասին տեղեկությունները պարունակվում են գերմանացի գիտնական Ա. Մերկելի «Լանգոբարդական իրավունքի պատմություն» գրքում, որը լույս է տեսել 1850 թվականին: 13-րդ դարի առաջին զլոստոր Դ. Օդոֆրեդուսը (Odofredus) պատմում էր իր ունկնդիրներին, որ առաջին հերթին հռոմեական իրավունքը դասավանդվում էր Հռոմում, այնուհետև այն փոխանցվել էր Ռավեննա: Եվ հետո միայն սկսեց դասավանդվել Բոլոնիայում:

Խոսելով հռոմեական իրավունքի և վաղ միջնադարի հռոմեական իրավունքի գործողության մասին՝ հետազոտողները քննարկում են տվյալ գործընթացները բացառապես իբրև նախաբան նրա, ինչը սկսեց տեղի ունենալ հռոմեական իրավունքի հետ 11-րդ դարից սկսած, այսինքն՝ իբրև դրա «ռեցեպիայի» նախապատրաստում: Այդպես, Ե. Օ. Խարիտոնովն իր ատենախոսության մեջ պնդում է, որ հռոմեական իրավունքի առաջին ռեցեպցիաները տեղի էին ունենում ոչ թե երկրորդ հազարամյակի առաջին դարերում, այլ տեղի են ունեցել վաղ միջնադարում՝ 6-10-րդ դդ... մ.թ.<sup>10</sup>: Համապատասխանաբար, հռոմեական իրավունքի ուսումնասիրությունը միջնադարյան արևմտաեվրոպական համալսարաններում, որը սկսվել է 11-րդ դարի վերջից, համարվում է գործողություն ու դրա ուսումնասիրության պարզ շարունակություն նախորդ դարաշրջանում: Ի. Ա. Պոկրովսկին, ավարտելով հռոմեական իրավունքի ուսումնասիրության և գործողության փաստերի կարճ շարադրությունը «նախաբոլոնյան» դարաշրջանում, եզրակացնում էր. «Այս բոլոր տվյալները երկբա վկայում են հռոմեական իրավունքի ինչպես կիրառման, այնպես էլ դասավանդման և ուսումնասիրման մասին»<sup>11</sup>: Խ. Ռաշդալի բառերով, «իրավագիտության վերածնունդը, որը կապվում է հռներուս անվան հետ, եղել է ուսուցողական ավանդույթների բնական արդյունք, որոնք հյուսիս-

<sup>9</sup> Sten Rashdal H. The Universities of Europe in the Middle Ages.m Vol. 1, էջ 93:

<sup>10</sup> Sten Харитонов Е.О., Рецепция римского приватного права (теоритический и историко-правовой аспекты), Автореферат дисс... доктора юрид. наук, Одесса, 1997, էջ 13:

<sup>11</sup> Sten Покровский И.А., История римского права, էջ 13:

սային Իտալիայի քաղաքները ժառանգել են այն հին հռոմեական աշխարհից, որին իրենք ինչպես ոգով, այնպես էլ սահմանադրական տեսությամբ երբեք չէին դադարում ընդհանուր առմամբ պատկանելուց»<sup>12</sup>:

Մեր կարծիքով, միջնադարյան Եվրոպայում հռոմեական իրավունքի ռեցեպցիայի թեմայով գրող գիտնականներն այդ երևույթում խառնում են իրենց էության երեք լիովին տարբեր երևույթներ, որոնցից յուրաքանչյուրն արժանի է իր սեփական անվանման:

Առաջին հերթին նշենք, որ հիմքեր կան խոսելու մասին գրեթե միաժամանակյա զարգացող հռոմեական իրավունքի երկու միջնադարյան ավանդույթների մասին:

Դրանցից առաջինը կարելի է պայմանականորեն անվանել «բարբարոսական» կամ «վուլգար»: Երկրորդը՝ «համալսարանական» կամ «սխոլաստիկ»: Անվանված ավանդույթներից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում էր լիովին ինքնուրույն բնույթ:

Սակայն, դրանից բացի, անհրաժեշտ է հատուկ առանձնացնել նաև այնպիսի երևույթ, ինչպիսին է իրավական հայեցակարգերի, ինստիտուտների, նորմերի օգտագործումը, որոնք մշակվել են արևմտաեվրոպական իրավագետների կողմից հռոմեական իրավաբանական տեքստերի հենքի վրա միջնադարյան արևմտաեվրոպական հասարակության կիրառական կյանքում որպես դատական վեճերի լուծման գործիք, այս կամ այն հասարակական հարաբերություններ կարգավորիչ:

Հռոմեական իրավունքի «բարբարոսական» կամ «վուլգար» ավանդույթը սկիզբ առավ մեր թվարկության 4-րդ դարում, երբ հին հռոմեական հասարակության կյանքի ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական ոլորտներում սկսվեց հռոմեական իրավունքի նախորդ՝ «դասական» ավանդույթի հարգումը: Գերմանացի իրավագետ Մ. Կազերի կարծիքով, Հին Հռոմի իրավական մշակույթի զարգացման գործում վճռորոշ բեկում տեղի ունեցավ Կոստանտինոս կայսրի կառավարման օրոք (306-337 թթ.): «Կայսերական կանցելյարիան, որն անգամ Դիոկլետիանոսի օրոք ձգտում էր շարունակել դասական իրավունքի մտավոր ավանդույթը, այժմ մերժեց այդ ավանդույթը: Օրենսդրությունն ու արդարադատության իրականացման նկատմամբ կենտրոնական հսկողությունն, ընդհանուր առմամբ, տեղափոխվեց այն անձանց նկատմամբ, որոնք սովորել են ոչ թե իրավունք, այլ հռետորություն, և որոնց իրավաբանական մտածողության մեջ գերակշռում էին պարզունակ ու կենցաղային իրավունքները, այսինքն՝ «վուլգար» պատկերացումները: Դասական իրավագիտության առավել ակնառու նվաճումներից շատերն անհետացել են այդ «վուլգար իրավունքում», որի գլխավոր աղբյուրներ հանդես եկան կայսերական սահմանումներն ու դրանց մեկնաբանումները 4-րդ դարից և այլն, որոշ դասական ստեղծագործությունների ժամանակակից ռեկվիզիտների հետ մեկտեղ, հատկապես՝ Պավելի «Սենտենցիաների» և Գայի «Ինստիտուցիաների»<sup>13</sup>:

<sup>12</sup> Տե՛ս Rashdal H. The Universities of Europe in the Middle Ages. Vol. 1, էջ 93:

<sup>13</sup> Տե՛ս Kazar M. Roman law today: two lectures. Pretoria, էջ 9:

Հռոմեական իրավունքի «դասական» ավանդույթից հեռացումն արտահայտվեց, առաջին հերթին, դատական գործընթացի ոլորտում: Դիոկլետիանոս կայսերի վարչական բարեփոխումների ընթացքում միապետական կառավարման համակարգի վերջնական ձևավորումը բերել է դասական հռոմեական իրավունքի հիմք կազմվող ֆորմուլյար գործընթացի դուրս մղմանն արտասովոր՝ բյուրոկրատական գործընթացով: Դրա հետ մեկտեղ «դասական» հռոմեական իրավական ավանդույթի մարումն անուղղակիորեն անդրադարձավ նաև հռոմեական իրավունքի բուն բովանդակության՝ իր հասկացությունների ապարատի վրա: «Մեր ժամանակներին հասած դասական իրավաբանների ու օրենսդրական հուշարձանների մանրակրկիտ, մտածված ու նուրբ քննադատությունը,- գրում է բյուզանդիայի պատմության մասնագետ Ե. Է. Լիպշիցը,- համոզիչ բացահայտեց իրավական հայացքների արմատական տրոհման փաստերը՝ սկսած 4-րդ դարից: Այդ հետազոտությունների արդյունքներն ապացուցեցին, որ վերանայման բուռն գործընթացն իր հետ վերցրեց այն հասկացությունները, որոնք ներառում են մասնավոր կամ քաղաքացիական իրավունքի գրեթե բոլոր կարևոր գույն բաժինները: Առօրյա կենցաղից «վուլգար» կամ «վուլգարացված» ու սովորական իրավունքից փոխառված հասկացություններ ինչպես հռոմեական, այնպես էլ ոչ հռոմեական, գաղութային, հելլենիստական և արևելյան, հզոր հոսքով մտնում են այդ ժամանակ պաշտոնական օրենսդրության մեջ, կոտրում են եզրաբանությունը»<sup>14</sup>:

Հռոմեական իրավունքի եզրաբանության նշված կոտրումը, որը տեղի է ունեցել 4-րդ դարում, գլխավորապես արտահայտվեց դրա պարզեցման, նախորդ հստակության, որոշակիության կորստի, իրավական ձևերի կրճատման մեջ:

Հռոմեական իրավունքի «բարբարոսական» ավանդույթի հաստատման գործում, որը եկել է «դասական» ավանդույթը փոխարինելու, խաղացին կայսերական սահմանադրությունների հավաքածուները: Այդպիսի իրավական հուշարձանների առաջին նմուշները, որոնք չգիտեր դասական հռոմեական իրավագիտությունը, ի հայտ են եկել 3-5 դարերի սահմանին: Դրանց կազմիչներն են եղել Դիոկլետիանոսի ժամանակակիցներ՝ իրավաբաններ Գրիգորիանն ու Հերմոգենիանը, որոնք, մեր հասած տվյալներով, ապրում էին Հռոմեական կայսրության արևելյան մասում:

Այդ առաջին օրենսգրքերի բնագրերը չեն պահպանվել, սակայն իրենց բովանդակության մասին կարելի է դատել հոդվածներով, որոնք ներառվել են այլ իրավական հուշարձանների մեջ: Կցկտուր տեղեկությունների հիման վրա մասնագետները եզրակացնում են, որ Գրիգորիանոսի օրենսգիրքը, օրինակ, եղել է բավականաչափ լայնածավալ՝ բաղկացած էր ավելի քան 19 գրքերից<sup>15</sup>:

Գրիգորիանոսի ու Հերմոգենիանիոսի օրենսգրքերի հղումները հետագայում մտել են տվյալ կարգի ամենահեղինակավոր հուշարձաններից մեկի՝ Թեոդոսիայի օրենսգրքի մեջ, որը կազմվել է 438 թ. և ընդգրկել է կայսերական բոլոր սահմանադրությունները, որոնք հրատարակվել են կայսր Կոստանտինոս 1-ից

<sup>14</sup> Տե՛ս Липшиц Б.Э., Право и суд в Византии в VI-VIII вв. М., 1976, էջ 9:

<sup>15</sup> Տե՛ս Чериловский З.М., Всеобщая история государства и права, М., 1995, էջ 111-112:

սկսած: Թեոդոսիի օրենսգիրքն արդեն իսկ օրենքների պաշտոնական հավաքածու էր, այն ուներ պարտադիր իրավաբանական ուժ: Դրա հետ մեկտեղ նաև այս իրավական հուշարձանը, ինչպես և նախորդ օրենսգրքերը, ծառայում են իբրև ուսումնական ձեռնարկ իրավունք դասավանդելու գործում: Հենց այդ պատճառով իր կազմի մեջ իր տեղն են գտել գործող կայսերական սահմանադրությունների հետ նաև իրենց իրավաբանական ուժը կորցրած սահմանադրությունները:

506 թ. Գալիայի տարածքում, որը կառավարվում էր վեստգոտյան թագավոր Ալարիխ 2-ի կողմից, ստեղծվել էր հռոմեական իրավունքի ավանդույթի «բարբարոսական» մշակույթի ավելի ընդարձակ մի հուշարձան՝ այդպես կոչված «Ալարիխի Բրեվիարի», որն իր մեջ պարունակում էր՝ 1) Թեոդոսիի օրենսգրքի 16 գրքերը զգալի բացթողումներով, 2) նոր կայսերական սահմանադրություններ, որոնք հրատարակված են ի լրումը Թեոդոսիի օրենսգրքին, 3) «Կատարյալ Գայ», այսինքն՝ «Գայի ինստիտուցիաներ» կարճ շարադրմամբ, 4) Հռոմեացի իրավաբան Հուլիոս Պողոսի «Սենտենցիաները», 5) Գրիգորիանոսի օրենսգիրքը 13 տիտղոսներով, 6) Հերմոգենիանի օրենսգիրքը 2 տիտղոսներով, 7) Հռոմեացի իրավաբան Պասինիանոսի ստեղծագործությունների հատվածները:

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է նշել, որ 6-ից մինչև 10-րդ դարաշրջանում հռոմեական իրավունքի «բարբարոսական» ավանդույթի զարգացումը բավականաչափ աղքատ էր իրավաբանական գրականության տեսանկյունից: Հավաքածուների թվի մեծացումը տեղի ունեցավ 11-րդ դարից սկսած: Մասնավորապես, նշված դարի երկրորդ կեսին հայտնվեց հրաշալի ձև ու բովանդակություն ունեցող ստեղծագործությունը, որը հսկայական ազդեցություն ունեցավ ամբողջ իրավաբանական ուշ շրջանի գրականության վրա և օգտագործվում էր իբրև դասագիրք, հատկապես՝ Հյուսիսային Ֆրանսիայում դեռևս 13-րդ դարում: Այդ ստեղծագործությունը հայտնի «Petri exceptiones legum Romanorum» է, այսինքն՝ «Պետրոսի կողմից կազմված հռոմեացիների օրենքներից քաղվածքները» 11-րդ դարի հռոմեական իրավունքի «բարբարոսական» ավանդույթի մեկ այլ նշանավոր հուշարձան դարձավ Բրախյուսյան (Brachyogusjuris civilis), որը ստեղծվել է, ինչպես նշում են տեքստի հետազոտողները, Բուլոնյան դպրոցի որևէ ազդեցությունից դուրս, հավանաբար՝ Օռլեանում:

Մեր կարծիքով, հռոմեական իրավունքի «բարբարոսական» ավանդույթը ծաղկում էր նաև 13-րդ դարում, այսինքն՝ նրանից հետո, երբ լիովին ծավալվեց արևմտաեվրոպական համալսարաններում հռոմեական իրավունքի դասավանդումը: Անգլիայում այդ ծաղկման առավելապես վառ արտահայտում է դարձել նշված հարյուրամյակի կեսերին ստեղծված «Անգլիայի օրենքների ու սովորույթների մասին» Հենրի Բրեքտոնի ստեղծագործությունը, իսկ Ֆրանսիայում՝ Ֆիլիպ դե Բոմանուարի «Բովեզիի Կուտյումների» հավաքածուն: Հռոմեական իրավունքի երկրորդ ավանդույթը պայմանակորեն կարող է անվանվել «համալսարանական», քանի որ այն իր զարգացումը ստացավ միջնադարյան արևմտաեվրոպական համալսարանների մոտ: Ինչպես և առաջինը՝ «բարբարոսականը», այդ ավանդույթը ենթադրում էր հռոմեական իրավունքի ուսումնասիրությունը որոշակի տեքստերի հենքի վրա: Սակայն հռոմեական իրավունքի «համալսարանա-

կան» ավանդույթում տեքստի նկատմամբ վերաբերմունքը լիովին այլ է դարձել:

Իրավական տեքստը նշանավոր է ոչ թե իբրև տեքստ ինքնին, այլ իբրև որոշակի սկզբունքների և գաղափարների արտահայտիչ: Դատավորը, վեճեր լուծելով, գործ էր ունենում առաջին հերթին իրավունքի գիտակների, իրավագետների, այլ ոչ թե տեքստերի հետ: Այն մասին, թե ինչ էր տեղի ունենում դատարաններում մինչև ստեղծվել են Օրենսգիրքն ու Հուստինիանոսի Դիգեստները, որոշ պատկերացում է տալիս Հուստինիանոս կայսրի սահմանադրությունը Դիգեստների սահմանման մասին, այդպես կոչված, «Տանտա» Սահմանադրությունը: Բնութագրելով Դիգեստներին և Հուստինիանոսին նա նշում էր. «Զե որ այն մարդիկ, ովքեր նախկինում դատավարություններ էին վարում, թեպետ և գոյություն են ունեցել բազմաթիվ օրենքներ, դատարաններում օգտագործում էին դրանցից քչերը միայն կամ գրքերի բացակայության պատճառով, որոնք իրենք չէին կարող ձեռք բերել, կամ դրանք չիմանալու պատճառով, ուստի դատական գործերը քննվում էին ավելի շուտ դատավորների կամքով, քան օրենքի հեղինակությամբ: Իսկ մեր Դիգեստների սույն հավաքածուի մեջ օրենքները հավաքված են այնքան հատորներից»:

Դրան ավելացնենք, որ իրավաբանական տեքստերը չէին կարող հին ժամանակներում և վաղ միջնադարում ձեռք բերել գերագույն հեղինակություն նաև այն պատճառով, որ իրենցից ներկայացրել են մեծ, և ամենակարևորը, բավականաչափ մեկը մյուսին հակասող ձեռագրերի զանգված: Կայսրերը փորձում էին որոշակի կարգուկանոն մտցնել դատավորների կողմից իրենց օգտագործման գործում: Այդպես, օրինակ, 321 թ. Կոնստանտինոս 1-ը իրատարակեց Սահմանադրություն, որտեղ թելադրեց դատավորներին ուշադրություն չդարձնել Պապիանի ստեղծագործությունների նկատմամբ Պողոսի և Ուլպինիանոսի քննադատական նկատողություններին, քանի որ իր կարծիքով, այդ երկու իրավագետները հոգ են տանում միայն իրենց փառքի մասին և ձգտում են ոչ այնքան ուղղել Պապինիանոսի կարծիքները, որքան մեղադրեն վերջինին: 327 թ. Սահմանադրությամբ Կոստանտինոս կայսրը թելադրեց դատավորներին որոշումներ ընդունելիս ղեկավարվել միայն Պողոսի «Սենտենցիաներով»: 426 թ. Թեոդոսիոս 2-րդ և Վալենտինիոս 3-րդ կայսրերի «Lex Allegatoria» որոշեց, որ դատավորների համար պարտադիր իրավաբանական ուժ ունեն հինգ իրավաբանների ստեղծագործությունները՝ Պապինիանոսի, Պողոսի, Ուլպինիանոսի, Մոդեստինի և Գայոսի («Papiniani, Pauli, Gai, Ulpiani atque Modestini scripta universa firmamus»): Իսկ ինչ վերաբերվում է հռոմեացի այլ իրավաբանների ստեղծագործություններին, ապա թույլատրվում էր ուշադրության դարձնել միայն այն մասերին, որոնց հղում էին կատարում նշված հինգ իրավագետները: Այն էլ միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ տեքստը հաստատվում էր մի քանի ցուցակների համեմատությամբ:

Տվյալ ավանդույթի ծագումը պատահական չէ կապվում Իռնեթիուսի անվան հետ: Ահա այս կերպ է նկարագրվում այդ իրավագետի կողմից հռոմեական իրավունքի ուսումնասիրման սկիզբը 12-րդ դարի սկզբի փաստաթղթերից մեկում. «Նաև այն ժամանակներում պարոն Իռնեթիուսը կոմսուիի Մատիլդայի խնդրանքով (Տոսկանայի մարկկոմսուիի) վերականգնեց օրենքների գրքերը, որոնք եր-



կար ժամանակ գտնվում էին կատարյալ անտեսված էին ու չէին ուսումնասիրվում: Եվ այն ձևին համապատասխան, որում դրանք կազմվել են երջանկահիշատակ Հուստինիանոս կայսրի կողմից, նա կարգավորեց դրանք ու բաժանեց մասերի, անգամ տեղ-տեղ տեղագրելով սակավաթիվ սեփական բառերը»<sup>16</sup>: Ֆ. Կ. Սավինին Իռներիուսի գիտական աշխատություններն անվանեց նոր ժամանակների իրավագիտական գրականության «ելակետ»: Ռ. Ռաշդալի բառերով՝ «Իռներիուսի դարաշրջանն իրենից ներկայացնում է իրավունքի օրիգինալ աղբյուրների ավելի մտերիմ, քննադատական և տեքստուալ, և միաժամանակ ավելի մասնագիտական ուսումնասիրության սկիզբ»<sup>17</sup>: Համաձայնվելով այդ արտահայտության հետ՝ ամեն դեպքում պարզեցնենք այն, որ գլոսատորների իրենց նախորդող իրավագետներից գլխավոր տարբերությունն այլ էր: Գլոսատորները սկսել են պարզապես ավելի ոչ «քննադատորեն» կամ ոչ «մասնագիտորեն» ուսումնասիրել իրավաբանական տեքստը: Նրանք դրանց հաղորդեցին բարձրագույն հեղինակություն: Տեքստի նկատմամբ իրենց մոտեցման մեջ վառ արտահայտությունը գտավ մտածողության, այդպես կոչված, սխոլաստիկական մեթոդը, որի համաձայն՝ տեքստում մարմնավորված միտքը ճշմարիտ է ինքնին և չի կարող ժխտվել իրական կյանքով:

Իրենց քաղաքական ու իրավական հայացքներով գլոսատորները կարող էին բավականաչափ էականորեն տարբերվել մեկը մյուսից, սակայն մի բանում իրենք միասնական էին. տեքստի՝ իբրև բարձրագույն հեղինակության մոտեցմանը, ինչի շնորհիվ էլ իրենցից կազմում էին մեկ գիտական դպրոց:

Առաջին անգամ իրավաբանական տեքստի նկատմամբ իրավագետների այդ աստիճան նուրբ վերաբերմունքն արտահայտվեց 11-րդ դարում: Մինչդեռ դրա սկիզբները նկատելի են արդեն 6-րդ դարում, դրանք կարելի է հայտնաբերել Հուստինիանոս բյուզանդական կայսրի սահմանադրություններում: Սկսելով հռոմեական իրավական ժառանգության համակարգումը՝ Հուստինիանոսը թույլ տվեց անմիջապես այդ աշխատանքի համար ստեղծած հանձնաժողովին բավականաչափ ազատորեն վարվել իրավաբանական տեքստերի հետ: Մասնավորապես, նա հրամայեց հեռացնել դրանցից այն ամենը, ինչը թվում է «կամ չափազանց, կամ ոչ լրիվ, կամ ոչ այնքան պիտանի», թողնելով «միայն ամենականոնավոր նորմերը»՝ հարթեցնելով հակասությունները, հարմարեցնելով նոր ինստիտուտները ժամանակակից պայմաններին: Պետք է ուղղվելին, ըստ Հուստինիանոսի մտադրության, անգամ նախորդ կայսերական սահմանադրությունները, որոնց մտցվել են հավաքածուների մեջ: Սակայն, երբ հռոմեական իրավական ժառանգության համակարգման գծով աշխատությունները ավարտվել են, Հուստինիանոսը հայտարարեց «Տանտա» Սահմանադրության մեջ. «Թող ոչ ոք չհամարձակվի համեմատել այն, ինչ ունեցել են հները, նրա հետ, ինչը մտցվել է մեր իշխանությամբ»:

Հուստինիանոսը թույլ տվեց որոշ բացատրություններ միայն Դիգեստների տիտղոսների անուններին: Կայսրի կարծիքով, հենց մեկնաբանները փչացրե-

<sup>16</sup> Տե՛ս Документы об истории университетов Европы XII-XV вв. Воронеж, 1973, էջ 25:

<sup>17</sup> Տե՛ս Rashdal H. The Universities of Europe in the Middle Ages. Vol. 1, էջ 123:

ցին «հավերժ էդիկտի» տեքստը, որով իսկ խառնաշփոթ մտցրեցին հռոմեական օրենսդրության մեջ: Հուստինիանոսի վերջնական վճիռը խիստ էր. «Եթե, համենայն դեպս, ինչ-որ անձինք կհամարձակվեն անել նմանատիպ մի բան, ապա թող իրենք մեղադրվեն իրի կեղծման մեջ, իսկ իրենց գրքերը թող վերացվեն հնարավոր բոլոր մեթոդներով»:

Հետաքրքիր է, որ բոլոր հայտնի ու իրենց մատչելի իրավաբանական տեքստերի շարքում միջնադարյան Եվրոպայի իրավագետներն ամենահեղինակավորի դերին ընտրել հենց Հուստինիանոսի «Դիգեստների» տեքստը: Մեր կարծիքով, հենց այդ ընտրությունն էլ կազմում է Դիգեստների, այդպես կոչված, «հայտնաբերման» իմաստը 11-րդ դարի երկրորդ կեսին: Նշված հուշարձանի տեքստն իրականում հետհուստինիանոսի ժամանակաշրջանում չէր հնանում և հայտնի էր իրավագետներին: Իսկ Հուստինիանոսի Դիգեստների «հայտնաբերման» զանազան տարբերակներն իրենցից միայն ավանդույթներ էին ներկայացնում:

Հռոմեական իրավունքի «համալսարանային» ավանդույթի էությունը հասկանալու համար, որը բուռն զարգացում ստացավ սկսած 11-րդ դարից, կարևոր է ի նկատի ունենալ, որ հուշարձանի տեքստին կարևորություն տալը ու դրան բարձրագույն հեղինակություն հաղորդելը բնորոշ էր ոչ միայն իրավագիտությանը, այլև միջնադարյան արևմտաեվրոպական հասարակության հոգևոր մշակույթի այլ ոլորտներին: Օրինակ, կաթոլիկ քրիստոնեական աստվածաբանության մեջ բարձրագույն հեղինակություն է դառնում Աստվածաշնչի տեքստը՝ թարգմանված լատիներեն, այդպես կոչված՝ «Vulgata»-ն: Փիլիսոփայության մեջ նման հեղինակություն էին ձեռք բերում Արիստոտելի տեքստերը, աշխարհագրության մեջ՝ Պլինի Ավագի տեքստերը: Հռոմեական իրավունքի «համալսարանական», «սքոլաստիկ» ավանդույթում հեղինակավոր էր ոչ միայն պարզապես իրավական տեքստը, այլև լիովին կոնկրետ ստեղծագործության տեքստը, որը գտնվում էր բոլոնյան իրավաբանական դպրոցի տրամադրության տակ՝ այդպես կոչված «Բոլոնյան Լիտերան»: Ընդ որում՝ լայնորեն ուսումնասիրվում էին նաև Հուստինիանոսի օրենսգրքի տեքստերը:

Համառոտ բնութագրմամբ, հռոմեական իրավունքի երկու ավանդույթների՝ «բարբարոսական» և «համալսարանական», հիմնական գծերը, որոնց գոյությունն ու զարգացումը միջնադարյան Արևմտյան Եվրոպայում նշվում է պատմական գրականության մեջ իբրև հռոմեական իրավունքի «ռեցեպցիա»:

Մեր կարծիքով, այդ ավանդույթների վրա անգամ մակերեսային հայացք գցելով՝ լրջորեն կասկածելի է թվում նրանց նկատմամբ ռեցեպցիայի հասկացության կիրառման իրավաչափությունը: Իրականում մի՞թե հռոմեական իրավունքի «բարբարոսական» կամ «վուլգար» ավանդույթն այնքան օտար է եղել միջնադարյան արևմտաեվրոպական հասարակության համար: Մի՞թե չձագեց այն և չզարգացավ այդ հասարակության ծագման ու զարգացման հետ միասին: Պատմագիտության մեջ արդեն վաղուց հաստատված Արևմտյան Եվրոպայում միջնադարյան հասարակության ծագման՝ իբրև հին գերմանական հասարակության տարրերի սինթեզի արդյունքների մասին պատկերացումը, որը եղել է Հին Հռոմի քանդվող սոցիալական համակարգի տարրերի հետ: Այդպես կոչվող, «վուլգար»

հռոմեական իրավունքը եղել է տվյալ սինթեզի անքակտելի տարր: Եվ միջնադարյան Եվրոպան փոխառել և զարգացրել է հռոմեական իրավունքն ու իրավական մշակույթը նոր բովանդակությամբ:

Ավելի բարդ է գործը հռոմեական իրավունքի «համալսարանական» կամ «սքոլաստիկ» ավանդույթի հետ: Այս առումով կարելի է պնդել, «հռոմեական իրավունքի ռեցեպցիա» հասկացությունն այստեղ կիրառելի է, քանի որ միջնադարյան արևմտաեվրոպական հասարակության մեջ անվանված ավանդույթի առաջացման ու զարգացման գործընթացի էությունը նշելու համար անհրաժեշտ է որոնել մեկ այլ բառակապակցություն. այստեղ գլխավորը եղել է իրավական նորմերի կամ սկզբունքների ընկալումը և դրանց նորովի իմաստավորումը: Մեր կարծիքով, այն, ինչը տվյալ դեպքում անվանվում է «հռոմեական իրավունքի ընկալում», եղել է անտիկ իրավական տեքստերի ներառումը միջնադարյան եվրոպական իրավական մշակույթի մեջ:

Մեր կարծիքով, գլոսատորիների դպրոցում իր առաջին զարգացումը ստացած հռոմեական իրավունքի «համալսարանական» ավանդույթում գլխավորը եղել է ոչ թե հռոմեական իրավական նորմերի ընկալումը և անգամ ոչ հռոմեական իրավաբանների իրավական տեքստերի ընկալումը, այլ իրավաբանական տեքստի նկատմամբ լիովին առանձնահատուկ վերաբերմունքի առաջացումը՝ վերաբերմունքի, որը հատուկ չէր անտիկ մշակույթին: Հռոմեական իրավունքի «համալսարանական» կամ «սքոլաստիկ» ավանդույթն ունի միջնադարյան ծագում: Միջնադարյան արևմտաեվրոպական հասարակությունը հռոմեական իրավունքը փոխառեց և զարգացրեց այն:

Որպես արևմտաեվրոպական հասարակության հատկանշական գիծ, որը վերջին հաշվով սահմանեց դրա դինամիզմը, բարձր ներուժն արագ զարգացման համար, հանդիսանում է այն կազմող տարրերի բազմազանությունը: Ընդհանուր առմամբ, այդ հասարակությունն իրենից ներկայացնում է տարբեր, հաճախակի հակասական շահերն արտահայտող զանազան կորպորացիաների ամբողջություն: Հզորագույն կորպորացիա այստեղ եղել է թագավորական իշխանությունը, ամենահզոր կորպորացիաներից մեկն էր կազմում կաթոլիկ եկեղեցին, մեծ ուժ ուներ որպես կորպորացիա կազմակերպված ազնվականների դասը, առևտրականները նույնպես կորպորացիաներ էին կազմում՝ կառավարման իրենց մարմիններով, բարոյական ու իրավական նորմերով: Կորպորացիաներ են եղել նաև միջնադարյան համալսարանները: Արդյոք պետք է հատուկ ապացուցել, որ որպես միասնություն՝ սոցիալական համակարգ, գոյություն ունեցող այդպիսի հասարակությունը կարող էր միայն ընդհանուր հոգևոր արժեքների առկայության դեպքում՝ արժեքների, որոնք հեղինակավոր են բոլորի համար ու համապատասխանաբար ընկալվում էր իբրև աքսիոմա: Դրանում, մեզ թվում է, անհրաժեշտ է փնտրել սքոլաստիկ մտածողության աղբյուրները և, մասնավորապես, տեքստի նկատմամբ այն վերաբերմունքի, որը սկսեց դրսևորվել սկսած 11-րդ դարից միջնադարյան արևմտաեվրոպական հոգևոր մշակույթի տարբեր ոլորտներում: Փխրուն, անկայուն աշխարհում հավերժ պայքարի ու անլուծելի հակասությունների աշխարհում ապրող մարդիկ որոշակի մտածողական հիմք էին գտնում

տեքստերում: Բոլորի համար հեղինակավոր տեքստերի առկայության շնորհիվ, կարելի էր գոնե ինչ-որ բան ապացուցել, իսկ դա նշանակում է՝ լուծել ինչ-որ վեճ, վիճաբանություն խաղաղ միջոցներով:

Իրավագիտության մեջ համընդհանուր հեղինակությունից օգտվող իրավական տեքստն արդեն ինքնին, անկախ սեփական բովանդակությունից, դառնում էր իրավական զարգացման հզոր գործոն: Տեքստին ամրացված իրավունքը ձեռք էր բերում համընդհանուր նշանակություն, դառնում էր անկախ կոնկրետ սոցիալական ընդհանրություններից, հետևաբար, պիտանի էր լինում այդպիսի բազմազան, բազմաթիվ տարբեր կորպորացիաներից բաղկացած հասարակությունում հասարակական հարաբերությունների կարգավորելու համար, ինչպիսին էր Արևմտյան Եվրոպան Միջնադարում:

Հռոմեական իրավունքի «համալսարանական» ավանդույթը՝ հեղինակավոր տեքստի վրա իր հիմքով ոչ միայն պարզապես ծնվել է միջնադարյան արևմտաեվրոպական հասարակության շրջանակում, այն՝ այդ ավանդույթը, եղել է տվյալ հասարակական համակարգի և դրա հոգևոր անքակտելի տարրը:

Կարելի է արդյո՞ք, որ միջնադարյան իրավագետներն օգտագործեն իրավաբանական հայեցակարգերը, ինստիտուտները, նորմերը, որոնք մշակված են իրենց կողմից հռոմեական իրավական տեքստերի հենքի վրա, կոչել հռոմեական իրավունքի ռեցեպցիա:

Կարծում ենք՝ որոշակի վերապահության կարելի է պատասխանել դրական: «Հռոմեական» իրավունքը, որը կիրառում էր գտնում գործնականում միջնադարյան Արևմտյան Եվրոպայի պայմաններում, միայն իր անունով էր «հռոմեական»: Իր բովանդակության այն էապես տարբերվում էր այն իրավունքից, որը երբեմն գործում էր Հին Հռոմում:

Այսպիսով, իրավաբանական գրականության մեջ «Միջնադարյան Արևմտյան Եվրոպայում հռոմեական իրավունքի ռեցեպցիա» կոչվող երևույթը պետք է ընդունել հարաբերականորեն, այլ ոչ թե բացարձակ իմաստով:

Հռոմեական իրավունքի ընդօրինակումը (ռեցեպցիան) Միջնադարյան Եվրոպայի պահանջմունքների արդյունք էր: Այն կարևոր գործոն, որը խթանիչ էր եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման և զարգացման գործում:

**Annotation.** This article discusses in detail the problematic issues of reception of Roman law. Based on the results of the analysis of literature and sources, the author puts forward the thesis developed by him that the reception of Roman law began in the 6th century and continued for many centuries until the 18-19 centuries.

Borrowing / reception / of Roman law is presented as a result of the requirements of Medieval Europe, which was an important factor and incentive in the formation and development of European common law.

**Аннотация.** В данной статье подробно обсуждаются проблемные вопросы рецепции Римского права. Основываясь на результатах анализа научной литературы и других источников, автор выдвигает разработанный им тезис о том, что рецепция Римского права началась еще в V веке и продолжалась в течение долгих веков вплоть до XVIII-XIX веков.

Заемствование /рецепция/ Римского права представлено как результат требований Средневековой Европы, являющейся важным фактором и стимулом в формировании и развитии европейского общего права.

**Քանալի բառեր** - հռոմեական իրավունք, մասնավոր իրավունք, ռեցեպցիա, իրավագիտություն, գլոսափորներ, երգլոսափորներ, մեկնիչներ, պանդեկտիստներ:

**Key words:** Roman law, private law, reception, jurisprudence, glossars, postglossars, pandectists.

**Ключевые слова:** Римское право, частное право, рецепция, юриспруденция, глоссаторы, постглоссаторы, пандектисты.

**Ս. Արմենակյան** - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլ. փոստ՝ sargisarmenakyan@mail.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 12.11.2019, տրվել է գրախոսության՝ 12.11.2019, երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 25.12.2019